№ 104 ՈՒՐԲԱԹ ՄԱՑԻՍԻ 17 1902 ՈՒՐԲԱԹ ՄԱՑԻՍԻ 17 № 104

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ս. Սարգիս եկեղեցու՝ երկու սեռից բաղկացած քառաձայն խումբը յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ կիրակի, մայիսի 19-ին, հոգեհանգիստ կը կատարվի նոյն եկեղեցու նախկին վանահայր եւ այդ խմբի հիմնադրող՝

ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱԻԱՔԱԼԵԱՆԻ

յիշատակին։ Սրանով հրաւիրվում են նրա յիշատակը յարգողները ներկայ լինել պատարագին, որը սկսվելու է առաւօտեան ժամը 10-ին։ Հոգեւորականներին առանձին հրաւէր չի ուղարկվի։ 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւոր է եւ մեզ համար.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մոսկվայից. Նամակ Երեւանից. Նամակ Սղնախից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆրանս-ռուսական տօները.

ԿԱՐԵՒՈՐ Է ԵՒ ՄԵԶ ՀԱՄԱՐ

Այն մեծ դժբաղդութիւնը, որ տեղի ունեցաւ Մարտինիկա և Հարաւային կղզիներում, առիթ է տուել գիտնականներին առանձին ուշադրութիւն դարձնել երկրաշարժների և հրաբուղխների ուսումնասիրութեան վրա։ Վերջին ժամանակները սկսել են և ուրիշ հրաբուղխներ եռանդուն գործունէութիւն ցոյց տալ։ Իտալիայի նշանաւոր Վեզուվ հրաբուղխը, որ քրիստոնէութեան տարեգրութեան ժամանակներից մինչև այժմ անշէջ գործում է, սկսել է առատօրէն կրակ և շոգիներ արտաբերել։ Ամերիկայում գտնվող մի քանի հին հրաբուղխներ նորից բացել են իրանց բերանները, որոնք փակված էին համարվում։ Կան երկրաբաններ, որոնք կարծում են թէ հրաբուղխների գործունէութեան ուժեղանալը չի սահմանափակվի եղած ծաւալով, այլ կընդարձակվի և առաջ կը բերէ նոր անսպասելի աւերումներ։

Չը նայելով, որ երկրաշարժների և հրաբուղխների ուսումնասիրութիւնը կատարվում է շատ վաղուց և գոյութիւն ունեն բազմաթիւ լուրջ և հիմնաւոր աշխատութիւններ նրանց մասին, այնուամենայնիւ գիտնականները դեռ ճիշդ գաղափար չունեն երկրաշարժների և հրաբուղխների ժամանակակից դրութեան մասին, անկարող են նախատեսել նրանց գործունէութիւնը և չեն մշակել ոչ մի սիստեմ որոշ կերպով կապելու զանազան երեւոյթները միմեանց հետ։

Մեր երկրի համար ևս մեծ նշանակութեան ունեն երկրաշարժական և հրաբղխային երեւոյթները։ Վերջին տարիները մեր երկիրը տեսաւ երկու այնպիսի մեծ երկրաշարժական ցնցումներ, ինչպէս էին Ախալքալաքի գաւառի և Շամախու շրջանի երկրաշարժները։ Իսկ տասնեակ տարիների ընթացքում նոյն վիճակին ենթարկվել են մեր երկրի և ուրիշ մասերը։ Ընդհանրապէս ամբողջ Անդրկովկասը գտնվում է երկրաշարժային գօտիի շրջանում և միշտ կարող են տեղի ունենալ սարսափելի դէպքեր, որոնց նմանները թաղեցին Ակոռի գիւղը քառասուն թուականին և աւերեցին բազմաթիւ գիւղեր վերջին տարիները։

Այդ տեսակէտից մեծ հետաքրքրութիւն են ստանում բոլոր այն ուսումնասիրութիւնները և հետազօտութիւնները, որոնք ներկայումս ձեռնարկվում են Ամերիկայում և Եւրոպայում երկրաշարժների և հրաբուղխների վերաբերութեամբ։ Անկասկած, մենք ևս պարտաւոր ենք ուշադրութեամբ ծանօթանալ այն եզրակացութիւնների հետ, որոնք կը ստացվեն արտասահմանում կատարվող ուսումնասիրութիւններից։ Անկալի է, որ մեր գիտնական հիմնարկութիւնները աչքի առաջ ունենային այդ հանգամանքը և մեզ ներկայացնէին այդ ուսումնասիրութիւնների արդիւնքները։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԱՆՍ-ՌՈՒՍԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ

(Նամակ Պետերբուրգից)

II

Մայիսի 7-ից սկսած Պետերբուրգը անճանաչելի է դարձել։ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Էմիլ Լուբէ հազիւ երէկ ոտքը կոխեց Ռուսաստանի հողի վրա եւ Կրոնշտատի ամրութիւններից արձակվեց նրա գալուստը ողջունող առաջին թնդանօթը, եւ ահա Պետերբուրգում բարձրացաւ այնպիսի աղմուկ, ժխոր, ոգեւորութիւն, որի նմանը դեռ այդ քաղաքում չէ եղել մինչեւ այսօր, ինչպէս վկայում են հին բնակիչները։

—Vive la France, vive Loubet,—ահա այն աղաղակները, որ երէկվանից սկսած թնդում են Նէվսկի պրոսպէկտի վրա։ Այդ աղաղակները որոտընդոստ դարձան, մանաւանդ երեկոյեան ժամը 10-ին, երբ Ֆրանսիացի հիւրերը Ցարսկոյե-Սելօից եկան Պետերբուրգ՝ քաղաքի կողմից ի պատիւ իրանց տրվող չքեղ եւ փայլուն բանուին։ Քաղաքային տան առաջ ասեղ գցելու տեղ չը կար. մի քանի ժամ առաջ միայն վերցրել էին վարագոյրները այն երկու մեծ կոթողների վրայից, որ քաղաքը կանգնեցրել է ի յիշատակ Լուբէի այցելութեան։ Դումայի դռան առաջ կանգնեցրած են երկու երկար փայտեայ սիւներ, ոլորված թարմ ծաղիկներով. այդ սիւների վրա թառ են եղած երկու ոսկեզօծ արծիւներ, թեւերը տարածած։ Նրանց մէջտեղ չինված է մի ամպհովանի, կարմիր թաւիշով ծածկված. ամպհովանու կատարին զետեղված է մի մեծ երկրագունդ, երկրագնդի գլխին մի հրեշտակ, բաղկատարած, դեղեցիկ կնոջ կերպարանքով, ձեռքին բռնած մի վահան, որի վրա մակագրված է pax—խաղաղութիւն. դա՝ փառքի արձանն է, համաշխարհային խաղաղութեան պահապան հրեշտակը։ Ամպհովանու ներքոյ դրված են Նիկոլայ II կայսրի եւ Էմիլ Լուբէի մեծ արձանները։ Այդ կոթողի դէմ յանդիման, փողոցի միւս կողմին, դրված է մի այլ կոթող—Ռուսաստանը եւ Ֆրանսիան, որի մասին խօսեցի անցեալ անգամ։ Առաջին կոթողը շրջապատված դարնանային ծաղիկներով, վարդերով եւ ողողված ամբողջովին եւլեքտրական երեքգունեան լոյսով, հմայիչ տպաւորութիւն է թողնում երեկոյեան։

Հետզհետէ կառքերով հասնում են ֆրանսիական հիւրերը, «ուրա»-ներին վերջ չը կայ։ Դումայի ընդարձակ դահլիճները լի են արդէն բարձրաստիճան պաշտօնեաներով, զինուորականներով, ձայնաւորներով, մամուլի ներկայացուցիչներով։ Ալէքսանդրեան կոչված մեծ դահլիճը ուղղակի մոգական տպաւորութիւն է թողնում եւլեքտրական գոյնզգոյն լապտերների արձակած ճառագայթներով։ Լոյս, ծաղիկ—ահա ինչի մէջ են ընկղմված սրահները։ Մօտ 700 հրաւիրվածներ կան։ Երաժշտութիւնը չարունակ նուագում է «Մարսէյլեզ» ամեն անգամ, երբ գալիս են ֆրանսիացիները. vive la France, vive l'alliance franco-russe» աղաղակներով ողջունվում են հիւրերը թէ փողոցում, ամբոխի կողմից, եւ թէ ներսում, դումարված հասարակութեան կողմից։

Քաղաքագլուխ Էչեանով իր օգնականի հետ ընդունում է հիւրերին։ Սրահներից մէկում ի ցոյց են դրված բոլոր այն թանգագին նուէրները, որոնք թէ Պետերբուրգի, թէ Մոսկվայի կողմից պէտք է մատուցանվեն Լուբէին եւ նրա հետեւորդներին. դրանք բոլորն էլ ոսկեջրած արծաթէ դեղարուեստական սկաւառակներ, բաժակներ, աղամաններ եւ այլ այդպիսի առարկաներ են։ Իսկ Ալէքսանդրեան դահլիճում մարմարեայ պատուանդանների վրա ի ցոյց են դրված այն երկու մեծ սեվրի անօթները, որ նախագահ Լուբէն Ֆրանսիայի կողմից նուիրում է Պետերբուրգ քաղաքին։

Ժամը 11-ին սկսվում է երաժշտական-երգեցողական երեկոյթը. սապեօրների օրկէստրը նուագում է «Մարսէյլեզը» եւ Բօրէսպիէրի ուվերտիւրը. ապա մալօրոսական խումբը երգում է մալօրոսական երգեր Դավիդովսկու ղեկավարութեամբ։ Նրան հետեւում է բալալայկաների խումբը, Անդրէեվի ղեկավարութեամբ, որից յետոյ օրիորդ Ա. Վեալցէվա երգում է ցիգանական երգեր։ Պէտք է ասել սակայն, որ կօնցերտը բաւական անաջող էր. յամենայն դէպս Պետերբուրգ քաղաքը կարող էր ոչ այդպիսի միջակ եւ անաջող կօնցերտով հիւրասիրել Ֆրանսիացիներին, որոնց մէջ կային Պարիզի բարձր, արիստոկրատական շրջանին պատկանող անձինք։ Ճիշդ է, Ֆրանսիացիները, իբրեւ հիւրեր եւ բարեկիրթ ու քաղաքավարի հիւրեր, ծափահարում էին, բայց տարակոյս չը կայ, որ նրանք մեծ կարծիք չեն կարող ունենալ ռուսական երգերի մասին։ Այդ է պատճառ, որ նոյն իսկ այնպիսի լրագիր, ինչպիսին է «Пет. Листокъ», վերին աստիճանի զայրոյթով յարձակվում է դումայի վրա այդ անաջող կօնցերտի պատճառով, ասելով.. «Մինթէ հնարաւոր է Վեալցեվային ցոյց տալ Եւրոպային, երբ նոյն իսկ մեր գաւառը վրդովված է նրա կօնցերտներով»։

Ժամը 12-ին նորից հնչում է հանդիսաւորապէս «Մարսէյլեզը». ներս են մտնում ծովապետ Բուստանը եւ ֆրանսիական դեսպան Մանտէբելլօն։ Ծովապետը մի բարձրահասակ, ալեխառն մազերով, մօտ 50 տարեկան մարդ է, համակրելի դէմքով։ Քաղաքագլուխ Էչեանով, բարձրացնելով շամպայնի բաժակը եւ դիմելով ծովապետ Բուստանին, ասաց ֆրանսերէն. «Երկիւղ եմ կրում, որ չը կարողանամ հաղորդել մի ներկայացուցչին, նրա մահվան հարիւրամեակի առիթով, բաց ենք անում դպրոց։ Այստեղ չը պէտք է լինի ոչ առաջարկութիւն, ոչ խնդիրք եւ ոչ էլ խօսք. դա մի այնպիսի գործ է, որ մենք, իբրեւ պարտք, այո, միայն իբրեւ պարտք, պիտի կատարենք։ Մոսկվացիներիս համար վերին աստիճանի մի ամօթ է այդ, որ դպրոցի կառուցման համար հարկաւոր 25—30 հազար ռուբլին չենք կարողանում լրացնել եւ մինչեւ այժմ ստորագրվել են միայն 12 հազարից մի քիչ աւելի։ Սա ինչի՞ նման է։

Հարց յարուցվեց եւ էմմանուէլ քահանայ Նազարեանցին օժանդակութիւն տալու մասին։ Այդ քահանան ընտրված է Մոսկվայի ծխականների ընդհանուր ժողովի հիման վրա, սրանից 2 տարի առաջ։ Քահանայ Նազարեանին յատկացրած է 750 ր. ռոճիկ. բայց նա իրաւունք ունէր սպասելու, որ բացի դրանից կունենայ եւ արդիւնք։ Սակայն այդ յոյսը չէ իրագործվում։ Այսպէս, չնորհիւ իր միաբանակից Պոպովեան քահանային՝ Նազարեանց քահանան իր ընտանիքով ընկնում է դժուար դրութեան մէջ։ Եկեղեցական խորհուրդը, որ միանուագ յատկացրել է հայր Նազարեանցին 150 ր., չէ՞ կարող հօ այդ անել միշտ։ Հարկաւոր է ուշադրութեան առնել, որ երբ լինում է մի որ եւ է ծիսակատարութիւն, մեր ծխականները պահանջեն, որ երկու քահանաներն էլ միասին լինեն, որպէս զի ծիսակատարութիւններից դուրս եկած ամբողջ արդիւնքը միայն Պոպովեան քահանան չը ստանայ։

Վերջապէս սկսեցին ընտրութիւնները։ Պէտք էր ընտրել եկեղեցական խորհրդի 2 անդամ եւ 1 փոխանդամ։ 28 հոգի ծխականներից 10—12 թեկնածուներ ընտրվեցին։ Բայց համարեա ամենքն էլ պատճառներ բերելով՝ հրաժարվեցին թեկնածութիւնից։ Նախագահը անել դրութեան մէջ էր. մի կողմից ամենքը հրաժարվում են, միւս կողմից շատերը դուրս են գալիս դահլիճից, ամեն պարտք կատարած համարելով։ Սա մեզանում կոչվում է հաւաքվել գործ կատարելու, մի բան չինելու համար։ Վերջապէս պ. Մամիկոնեան դուրս է վազում դահլիճից, կանգնեցնում եւ համոզում, որ ընտրութիւն պէտք է կատարել, հեռանալ չէ կարելի։ Ծխականները երկար խնդրեցին ընտրված թեկնածուներին քուէարկվել։ Վերջապէս կարողացան համոզել պ. Մամիկոնեանին, Կուսիկեանին եւ Տէրեանին, որոնք եւ ընտրվեցին այսպէս՝ խորհրդի անդամներ՝ Մամիկոնեան եւ Տէրեան եւ փոխանդամ—Կուսիկեան։ Զ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

Մայիսի 7-ին

Մայիսի 5-ին կայացաւ Մոսկվայի հայոց եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը։ Նախագահ ընտրվեց երդվեալ հաւատարմատար Ս. Մամիկոնեան։ Եկեղեցիների խորհուրդը ներկայացրել էր 1901 թուի ելեւմտից հաշիւը, որի մէջ ծխականներից մի քանիսը գտան ակնյայտնի պակասութիւններ։ Նկատելով այդ թերութիւնները, ծխականները յայտնեցին, որ ամենայն սիրով հաւատում են խորհրդի անդամների ազնուութեան, բայց երեւում է, որ խորհրդի հաշուապահութեան գործը չատ ընկած եւ անորոշ դրութեան մէջ է։ Խորհրդի նախագահ պ. Գասպարեան աշխատում էր ապացուցանել հաշուի ճշդութիւնը, բայց այդ նրան չաջողվեց եւ վերջ ի վերջոյ խոստովանեց, որ ճիշդ է, խորհրդի գրքերը բոլորն էլ աչքաթող վիճակի մէջ են, խառնված են. չունենալով գործին տեղեակ մի հաշուապահ, ներկայ հաշիւը կազմելու համար նա խնդրել է պ. Էմ. Պոպովին, որ իր հաշուապահին յանձնելով այդ գործը, վերջապէս թիվել է մի հաշիւ, որը ծխականների վրա իր անկանոնութեամբ չատ վատ ազդեցութիւն թողեց։ Ժողովի նախագահն այդ առիթով առաջարկեց գոնէ տարին մի կամ երկու անգամ հրաւիրել մի կարգին հաշուապահ, որպէս զի խորհրդի մատեանները կարգաւորված եւ յայտնի ուղղութեամբ առաջ տարվեն, եւ թող խորհուրդը այդ բանի համար չը խնայէ մի քանի հարիւր ռուբլի։

Ժողովի մէջ խօսվեց դարձեալ ապագայում բացվելիք դպրոցի մասին։ Պ. Մամիկոնեան առաջարկեց ժողովականներին, որքան կարելի է չուտով, ստորագրել իրանց նուէրները եւ դատապարտեց այն անտարբերութիւնը, որ ներկայ պարագայում աչքի է ընկնում։

Եթէ կայ մի գործ, որը պէտք է ընդունենք գրկաբաց եւ սիրով, դա—ծխական դպրոցի բացման գործն է։ Մոսկվայում ուրիշ գաղութները ունեն իրանց եկեղեցիներին կից դպրոցներ, օրինակ՝ կաթոլիկները, լիւտերականները, աւետարանականները եւ այլն, մենք ենք, որ չունենք այդ։ Մի՞թէ անհասկանալի է Մոսկվայի հայերի համար, որ այդ խնդրի մասին թղմբկահարելը անտեղի եւ աւելորդ է. բաւական է, որ մեր առաջ դրած է այն խնդիրը, թէ մենք, իբրեւ երախտագիտութեան մի նշան, որ պիտի ցոյց տանք երեւելի Լազարեանների տոհմի մի ներկայացուցչին, նրա մահվան հարիւրամեակի առիթով, բաց ենք անում դպրոց։ Այստեղ չը պէտք է լինի ոչ առաջարկութիւն, ոչ խնդիրք եւ ոչ էլ խօսք. դա մի այնպիսի գործ է, որ մենք, իբրեւ պարտք, այո, միայն իբրեւ պարտք, պիտի կատարենք։ Մոսկվացիներիս համար վերին աստիճանի մի ամօթ է այդ, որ դպրոցի կառուցման համար հարկաւոր 25—30 հազար ռուբլին չենք կարողանում լրացնել եւ մինչեւ այժմ ստորագրվել են միայն 12 հազարից մի քիչ աւելի։ Սա ինչի՞ նման է։

Հարց յարուցվեց եւ էմմանուէլ քահանայ Նազարեանցին օժանդակութիւն տալու մասին։ Այդ քահանան ընտրված է Մոսկվայի ծխականների ընդհանուր ժողովի հիման վրա, սրանից 2 տարի առաջ։ Քահանայ Նազարեանին յատկացրած է 750 ր. ռոճիկ. բայց նա իրաւունք ունէր սպասելու, որ բացի դրանից կունենայ եւ արդիւնք։ Սակայն այդ յոյսը չէ իրագործվում։ Այսպէս, չնորհիւ իր միաբանակից Պոպովեան քահանային՝ Նազարեանց քահանան իր ընտանիքով ընկնում է դժուար դրութեան մէջ։ Եկեղեցական խորհուրդը, որ միանուագ յատկացրել է հայր Նազարեանցին 150 ր., չէ՞ կարող հօ այդ անել միշտ։ Հարկաւոր է ուշադրութեան առնել, որ երբ լինում է մի որ եւ է ծիսակատարութիւն, մեր ծխականները պահանջեն, որ երկու քահանաներն էլ միասին լինեն, որպէս զի ծիսակատարութիւններից դուրս եկած ամբողջ արդիւնքը միայն Պոպովեան քահանան չը ստանայ։

Վերջապէս սկսեցին ընտրութիւնները։ Պէտք էր ընտրել եկեղեցական խորհրդի 2 անդամ եւ 1 փոխանդամ։ 28 հոգի ծխականներից 10—12 թեկնածուներ ընտրվեցին։ Բայց համարեա ամենքն էլ պատճառներ բերելով՝ հրաժարվեցին թեկնածութիւնից։ Նախագահը անել դրութեան մէջ էր. մի կողմից ամենքը հրաժարվում են, միւս կողմից շատերը դուրս են գալիս դահլիճից, ամեն պարտք կատարած համարելով։ Սա մեզանում կոչվում է հաւաքվել գործ կատարելու, մի բան չինելու համար։ Վերջապէս պ. Մամիկոնեան դուրս է վազում դահլիճից, կանգնեցնում եւ համոզում, որ ընտրութիւն պէտք է կատարել, հեռանալ չէ կարելի։ Ծխականները երկար խնդրեցին ընտրված թեկնածուներին քուէարկվել։ Վերջապէս կարողացան համոզել պ. Մամիկոնեանին, Կուսիկեանին եւ Տէրեանին, որոնք եւ ընտրվեցին այսպէս՝ խորհրդի անդամներ՝ Մամիկոնեան եւ Տէրեան եւ փոխանդամ—Կուսիկեան։ Զ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 11-ին

Համաձայն քաղաքային վարչութեան ծանուցումների, քաղաքային խորհրդի գործունէութեան քառամեայ չրջանը շուտով լրանալու է եւ այդ պատճառով եկող սեպտեմբերի 22-ին նշանակված են քաղաքային նոր ընտրութիւններ 1902—1906 քառամեակի համար։ Ի նկատի ունենալով այն, որ ընտրողների վերջնական ցուցակները կը հրատարակվեն օգոստոսի 22-ին, 1000 ր. աւելի արժէք ունեցող անշարժ կայքի տէր քաղաքացիներին նախազգուշացնում են օր առաջ վճարել իրանց վրա մնացած քաղաքին հասանելի 10% տուրքը, որպէս զի չը կորցնեն ընտրութիւնների ժամանակ ձայն ունենալու իրաւունքը։

Զենք կարծում, թէ մեր հասարակութիւնը այս անգամ էլ այնպիսի գիտակցութեամբ առաջ չի գայ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ, ինչպէս եւ անցեալ անգամ, քանի որ անցեալ անգամի տուած արդիւնքը այսօր ակներեւ է ամենքին։

Անցեալ ընտրութիւնների միջոցին ջախջախվեց աղայականութիւնը, որը անգամ արգելք էր լինում քաղաքի այս կամ այն բարեկարգութեան խնդրում, հանդիսանալով որպէս մի ծանր խոչընդոտ. ընտրվեցին աննչան բացառութեամբ ինտելիգէնտ մարդիկ, փաստաբաններ, բժիշկ ու ուսուցիչ, պաշտօնեաների չրջաններից, վաճառականներ աւելի հասկացող դասից, մի խօսքով, մի կողմ թողած տարօրինակ հասկացողութիւնները, քաղաքային վարիչների կազմը ընդհանուր առմամբ շատ գոհացուցիչ էր եւ այդ կազմը իսկապէս կարողացաւ ուշադրութիւն դարձնել իր վրա եւ բարձրացնել քաղաքային ինքնավարութեան վարկը։

Շնորհիւ այսպիսի կազմի, ներկայ քառամեայ չրջանը իրագործեց եւ իրագործելու է մի քանի այնպիսի կարեւոր խնդիրներ մեր քաղաքի համար, որոնք տարիներով խօսակցութեան առարկայ դառնալով հանդերձ, ոչ մի կերպ լուծումն չէին ստանում նախկին դումաների կողմից։ Անձնական շահը, խաթրն ու խնամիութիւնը՝ աղայականութեան այդ պաշտամունքները՝ տապալում էին ամեն մի գործ։

Ջրի հարցը, մեր քաղաքի այդ կենսական խնդիրը, որի մասին այնքան գրվեց, եռանդուն կերպով հրապարակ բերվեց եւ լուծումն ստացաւ ներկայ կազմի օրով, չը նայած մի չարք արգելքներին։ Այս կազմի օրով հրապարակ հանվեց այսպէս անուանված «յափշտակութիւնների» հարցը։ Տարիների ընթացքում զանազան մարդիկ, նոյն իսկ քաղաքային խորհրդի պատկանող անհատներ՝ օգտվելով անտէրութիւնից՝ սեփականել էին քաղաքապատկան հողեր եւ բաժիններ։ Այս կողոպուտը շատերին յայտնի էր, բայց ոչ ոք քաջութիւն չունէր զարթեցնել այդ հարցը, մինչեւ որ ներկայ կազմը գործի դրուխ անցաւ։ Եւ թէեւ այդ գրաւումներից մի քանիսը հնար չեղաւ յետ խլել, բայց մի մասը առնվեց։ Ներկայ կազմի օրով նոյնպէս որոշվեց ունենալ սպանդանոց, անցկացնել ձիաքարշը եւ այլ երկրորդական խնդիրներ։

Ահա այս խնդիրների վերջնական լուծումը, առանձնապէս չուկայի եւ տակսայի կանոնաւորման խնդիրը (որոնց մասին, պէտք է ասել, շատ քիչ հոգս է տարվել) եւ ընդհանրապէս քաղաքի շահերը ի նկատի առած, այժմ աւելի քան երբ եւ իցէ բարոյական պարտք է ընկնում մեր ընտրողների վրա, որ նրանք գիտակցօրէն պատրաստվելով առաջիկայ ընտրութիւններին, իրանց քուէն տան այնպիսի մարդկանց, որոնք ընդունակ կը լինեն սկսած գործը բարեխղճօրէն առաջ տանել։

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Մայիսի 11-ին

Տասը ամիս է, ինչ բարձրացել է մոմապահեստի փողերի չարաչարդ հարցը, սակայն մինչեւ օրս դեռ եւս չէ լուծվել։ Ստիպված բազմաթիւ գրութիւններից եւ դիմումներից՝ կոնսիստորիան անցեալ դեկտեմբեր ամսին ուղարկեց Սղնախ քննիչ Մամբրէ վարդապետին եկեղեցական գործերը քննելու համար։ Քննիչի համար ծախսվեց մօտ 60 ր. (այդ էլ առանձին վնաս եկեղեցիներին)։ Մամբրէ վարդապետը առաւ մոմապահեստը կամայական կառավարիչ Նիկողայոս Ամիրխանեանից եւ յանձնեց յանձնաժողովին կառավարելու համար։ Վարդապետը ստացաւ Ն. Ամիրխանեանից 208 ր. 63 կ. փող, 4 պուդ մեղրամոմ, 360 ր. ստորագրութիւն ապառիկներ ստանալու եւ հաշիւ։ Այդ հաշիւը քննիչն առաջարկեց քննելու յանձնաժողովին, որը իր կազմած արձանագրութեամբ երեւան հանեց զեղծում մօտ 2500 ր. Եկեղեցական փողերը վատնելու համար յանձնաժողովը պահանջեց դատի ենթարկել Ն. Ամիրխանեանին։

Պէտք է կարծել, որ քննիչի գալով ամեն ինչ վերջացած պէտք էր համարել եւ գործին օրինական ընթացք տալ. սակայն կոնսիստորիան նորից բանակցութեան մէջ մտաւ Ն. Ամիրխանեանի հետ, պահանջելով նրանից հաշիւ եւ բացատրութիւն գաւառապետի միջոցով, որովհետեւ նրա ներկայացրած հաշիւը անկանոն եւ թերի է համարել։ Գործն այսպէս էլ մնում է, եւ Ալլահին է յայտնի, թէ երբ կը վերջանայ։ Մեծ յոյսեր ունէին թեմի կառավարիչ համալսարանական երիտասարդ վարդապետի վրա, բայց սա էլ հիասթափեցնել տուեց... Կոնսիստորիան ոչ ինքն է սկսում դատ եւ ոչ իրաւունք է տալիս ծխի ներկայացուցիչներին դատ սկսելու։ Ցայտնի չէ նոյնպէս, թէ ինչ հետեւանք ունեցաւ նախկին երէցփոխ Ալէքսանդր Ամիրխանեանի 1076 ր. 62 կ. նոր պարտքի եւ 930 ր. հին պարտքի հարցերը։ Կոնսիստորիայի այս քաղաքականութիւնը լաւ են հասկանում մեր եկեղեցական փողերի տզրուկները եւ անվճռական պատասխաններով աշխատում են միշտ գործը ձգձգել։ Այսպէս վարվելով, կոնսիստորիան կորցնում է իր հեղինակութիւնը ժողովրդի աչքում։ Եկեղեցական շահերը պաշտպանելով՝ գործի ղեկավար մի բուռն ինտելիգէնտ երիտասարդներ զրկանքներ կրեցին եւ ենթարկվեցին սաստիկ թշնամութեան եւ ատելութեան... սակայն արդարները կոնսիստորիայի շնորհիւ մեղաւոր են դուրս գալիս, իսկ մեղաւորները՝ արդար։ Կոնսիստորիայի այս քաղաքականութիւնը այն հետեւանքը կունենայ, որ գործի նախաձեռնող ինտելիգէնտներ, չը գտնելով արդարադատութիւն, կը վհատվեն, կը հեռանան ասպարէզից եւ կը սկսվի սովորական մեռելութիւն։

Սղնախի եկեղեցիները վաղուց կողոպտվում են շնորհիւ տեղիս հոգեւորականութեան ապիկար եւ գայթակղեցուցիչ վարմունքի եւ ամբոխի անգիտակցութեան։ Մեր երեք եկեղեցիները չունեն ոչ արդիւնաւոր կալուածներ եւ ոչ առձեռն գումարներ։ Մոմապահեստը առաջ տարեկան տալիս էր 1200—1300 ր. արդիւնք, որով պահվում էր նախկին հայոց դրպրոցը։ Վեց տարի է, ինչ դպրոցը փակվեց, ուրեմն խնայված պէտք է լինի մօտ 6000—7000 ր., մինչդեռ ոչինչ չը կայ... Եկեղեցիների նիւթական դրութիւնը բարեկարգելու համար հոգեւոր իշխանութիւնը պարտաւոր է քաջալերել եկեղեցական շահերի համար ցաւող աշխարհական անձանց, այլապէս այս ուղղութիւնը կը տանէ դէպի եկեղեցիների կատարեալ անկում...

Ե. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պարիզ, մայիսի 15-ին

«Բանասէրի» ապրիլի համարը հրապարակ հանելուց յետոյ, թիւրիմացութիւնների տեղի չը տալու համար խնդրում եմ թոյլ տալ ինձ «Մշակի» միջոցով յայտնել, թէ նոյն ապրիլի համարում, եր. 100, ծանօթ. 1, յայտնած կարծիքս Գագիկ Ա.-ի որդի Աշոտի մասին, «որ չէ թագաւորած», իսկական իմաստով է, քանի թագ չէ ընդունած, այլ բռնակալութեամբ իշխած է երկրին մէկ մասին վրա։ Բուն «թագաւոր» էր նրա եղբայրը Յովհաննէս—Սմբատ։

Մատթէոս Ուռհայեցին անիրաւութեամբ ասում է, թէ «բռնակալեաց Յովհաննէս զաթոռ թագաւորութեանն հայոց». անիրաւութիւն է, քանի որ Յովհաննէս «աւագ էր քան զԱշոտ» եւ հետեւաբար—գահաժառանգ։ Իսկ Աշոտ՝ իր բռնակալ ընթացքովը՝ վերջապէս յաջողեցաւ ինքզինքը փոխարքայ կարգել տալ «դրուց աշխարհին», այսինքն՝ Յովհաննէս—Սմբատի երկրներից դուրս։ Այս է, կարծեմ, Ուռհայեցու հետեւեալ խօսքերին իմաստը.—«Եւ յետ աւուրց ինչ խորհեցան Բագրատունիքն եւ Պահլաւունիքն եւ այլ ամենայն ազատագունդ զօրքն հայկազանց առնել խաղաղութիւն ի մէջ Յովհաննիսի եւ Աշոտոյ։ Եւ յորժամ սուրբ հայրապետն Պետրոս եւ իշխանքն ամենայն ելին առ Աշոտ եւ մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի. եւ եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն տանն Հայոց։ Եւ յայնժամ եղեւ խաղաղութիւն ամենայն աշխարհին հայոց»։ «Ուռհ.», եր. 10, Վաղարշապատ. 1898)։ Ուռհայեցին նոյնտեղ ասում է նաեւ. «Իսկ թագաւորն Աշոտ ոչ ժամանեաց բնաւ մտանել ի քաղաքն յԱնի մինչեւ ցօր մահուան իւրոյ»—Թէեւ մի ուրիշ տեղ դարձեալ նոյն պատմիչը յիշում է երկուսը միասին, իբրեւ զատ եւ համաստիճան թագաւորներ,—ինչպէս՝ «...ընդ ժամանակս Վասլին յունաց թագաւորին, եւ Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց արքայից...» (անդ, եր. 34),—բայց վերի դիտողութիւններէս տեսնուեցաւ, որ Աշոտ թագակիր «արքայ» չէր, այլ միայն ինքնիշխան փոխարքայ։

Փափագելի է լսել այս մասին մեր բանասէրների կարծիքը։

Կ. Ե. Բասմաջեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, ապրիլի 20-ին

«Պարսկաստանի հակակլերիկալ ընկերութեան» վարչութիւնը իր խորին չնորհակալութիւնն է յայտնում հետեւեալ անձնաւորութիւններին եւ մանաւանդ նորին կայսերական բարձրութեան Պարսից թագաժառանգ իշխանին, որ ընկերութեանս մարդասիրական նպատակին համակրելով, բարեհաճեց իր իշխանավայել նուէրով քաջալերել ընկերութիւնս։

Նուիրատուներն են. Բարձր. թագաժառանգ իշխան (125 ֆրանկ) 250 զրան, Լօղման-իւլ-Մէմալիք (թագաժառանգ իշխանի բժիշկը) 12 զր., Սըղատ-իւլ-Դէօվլէ 12 զր., Սալար Մուազամ 12 զր., Աֆզամ-իւլ-Սալտանա 12 զր., Հասան աղայ Գէնջէի Մէհմէդօֆ Ֆրէր 24 զր., Սեդրաք Պետրոսեան (Ղազանից) 13 զր., Մրտրը Ուիլսըն 22 զր., բժշկապետ Վահան Արծրունի (Թիֆլիսից) 31 զր., դոկտ. Ռայթ 30 զր., Յակոբ Ակէօն (Նիւ-Եորքից) 50 զր., դոկտ. Վանըմէն 20 զր., տիկ. Վ. Փաշայեան 13½ զր., օրիորդ Բիբբը 20 զր. գումար 521½ զրան։

Նախագահ վարչութեան՝
Դոկտ. Կ. Ե. Փաշայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները՝ 1) Մոսկուաբնակ տիկին Վառվառէ Քանասեանից 50 ր. 2) Բալախանիի Փիթօեվի գործարանում աշխատող մի խումբ գործակատարներից եւ արհեստաւորներից 11 ր. 3) տիկին Սոֆիա Սելիկեանից 5 ր. 4) Էվլիյեանից 1 ր. եւ 5) Ս. Յակոբեանից 1 ր. որոնք նախկին ստացածների հետ կազմում են 589 բուբլի 50 կոպէկ։

—

Մի պարոնից ստացանք աղքատներին բաժանելու համար 1 բուբլի։

—

Մեզ հաղորդում են, որ չորեքշաբթի, մայիսի 15-ին, մի խումբ հայ ինտելիգէնտ երիտասարդներ Թիֆլիսի «Ֆանտազիա» այգում ճաշ տուին ի պատիւ Մարբուրգի համալսարանի հայագէտ պրոֆէսօր Ֆինկի։ Պրոֆէսօր Ֆինկ խմբագրում է «Zeitschrift für Armenische Philologie» ամսագիրը եւ վերջին ժամանակ աշխատում էր Էջմիածնի գրադարանում։ Նա այժմ ուղեւորվում է նորից Մարբուրգ։

—

Երէկ, մայիսի 16-ին, Թիֆլիսից ուղեւորվեց դէպի Միջին-Ասիա Կովկասի տեղագրութեան յայտնի հետազօտող գերմանացի Մէրցբախէր։ Նրա ճանապարհորդութեան գլխաւոր նպատակն է հետազօտել Տեան-Շանի լեռնաշղթան։ Մէրցբախէրի հետ միասին ճանապարհորդում են եւ մի երկրաբան, մի երկրաչափ, կենդանաբանական եւ բուսաբանական առարկաների մի պատրաստող եւ մի ուղեցոյց անձն։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը՝ Թիֆլիսի նահանգապետի հարցին, թէ երբ է նա մտադիր կատարել նոր ձայնաւորների ընտրութիւնը, պատասխանեց, որ նոր ձայնաւորների ընտրութիւնը յարմար կը լինէր կատարել սեպտեմբերի 14-ին եւ 15-ին եւ դրա համար մտադիր է

պարզ ոճով ամբողջ մեծ նշանակութիւնը այն դէպքերի, որոնք կատարվում են մեր աչքի առաջ։ Մեծ ազգը ողջունող թնդանօթների որոտումը, ողջագուրական աղաղակները, ընդհանուր ուրախութիւնը եւ ոգեւորութիւնը—այս ամենը ձուլվել է մի ներդաշնակ եւ հանդիսաւոր երգի մէջ ի պատիւ խաղաղութեան, արդարութեան եւ եղբայրական սիրոյ։

«Բարձրացնում եմ բաժակս եւ խմում եմ ֆրանսիական մեծ ազգի կենացը, նրա նախընտրեալի՝ Էմիլ Լուբէի կենացը, ֆրանսիական փառաւոր նաւատորմի եւ բոլոր ձեր, մեր թանկագին հիւրերի կենացը»։

«Vive la France, vive la Russie» գոչիւններով թնդում է դահլիճը. նորից «Մարսէյլեզ», «Боже царя храни»։

Ծովապետ Բուստան պատասխանում է. «Ես միայն մի քանի ժամ եմ գտնվում Ռուսաստանում, բայց արդէն ես կարողացայ այնպէս մօտենալ ռուսների հետ, որ ինձ զգում եմ եղբայրների մէջ։ Ես ամբողջովին համակված եմ եղբայրսիրական այդ զգացումով եւ Ֆրանսիա վերադառնալով ես կը հաղորդեմ իմ բոլոր համաքաղաքացիներին, որ ես անձնապէս համոզվեցի ռուսաց զօրքի, նաւատորմի եւ բոլոր ռուս քաղաքացիների եղբայրական տրամադրութեան մէջ։ Եւ անկասկած է, որ բոլոր ֆրանսիացիներն եւս տոգորված են նոյն զգացումներով դէպի Ռուսաստանը։ Բարձրացնում եմ բաժակս ռուսաց ազգի եւ ֆրանկո-ռուսական դաշնակցութեան համար»։

Պաշտօնական ճառերի աւարտումից յետոյ սկսվեց մտերմական ընթրիքը, երբ ամենքը օրվայ դէպքերի, շամպայն գինու ուրախ ազդեցութեան տակ առանց քաշվելու խօսում, հրճվում են։ Ընթրիքը անցաւ շատ ուրախ։ Իմ կողքին նստած մի երիտասարդ առաջ ծանօթացաւ ինձ հետ. մենք սկսեցինք խօսել ֆրանս-ռուսական դաշնակցութեան եւ ֆրանսիացիներին ցոյց տուած ընդունելութեան մասին։ Նա տուեց ինձ իր քարտը, «դեր-կոմս Լուի դը Բլուա»։ Ստանալով իմ քարտս եւս, նա իսկոյն ասաց. «Ah, monsieur, nous aimons bien les arméniens»—«ահ, պարոն, մենք շատ սիրում ենք հայերին»։ Եւ մենք խօսեցինք հայերի մասին։

Բայց արդէն ժամը 3-ն էր. փողոցում դեռ լսվում էին աղաղակները. «Կեցցէ Ֆրանսիա, կեցցէ Լուբէ»։ Հիւրերը չտապեցին մեկնել, որովհետեւ առաւօտեան ժամը 10-ին Կրասնոյե Սէլօյում զօրահանդէսին պէտք է ներկայ լինէին։

Այսօր, մայիսի 8-ին, երեկոյեան ժամը 10-ին, «Медвѣдь» կոչված մեծ հիւրանոցում նշանակված է ի պատիւ ֆրանսիական մամուլի մեծ բանկէտը։

Մայիսի 8-ին, առաւօտեան, փողոցները դարձեալ լի են մարդկանց խուռն բազմութեամբ. ամենքը շտապում են գնել լրագիրները՝ կարդալու համար երեկվայ արտասանված ճառերը Ցարսկոյե Սէլօյում, երեկոյեան տրված պաշտօնական ճաշի ժամանակ։ Կրկնել այստեղ այդ ճառերը հարկ չը կայ, քանի որ հեռագիրն արդէն յայտնել է, բայց պէտք էր տեսնել պետերբուրգցիների ուրախութիւնը, կարդալով այդ հեռագիրները։ Նորից տարածվում են Լուբէի պատկերները. կառքերը ոչ միայն տնային, այլ եւ հասարակական կառքերը, վելօսիպէդները, կառապանները, ամենքը զարդարվել են երեքգունեան դրօշակներով։ Ամբոխը հազիւ նկատում է փողոցում մի ֆրանսիացի նաւաստի, որ իսկոյն չրջապատում է նրան, «vive la France», գոռալով։ Նաւաստին պարտքի տակ չէ մնում. վերցնելով իր գլխարկը, նա գոռում է «vive la Russie». ապա իր գլխարկը դնում է ռուս նաւաստիի գլխին, նրա գլխարկը ինքը հագնում եւ առաջ փառաջ ընթանում փողոցով, չրջապատված խուռն բազմութեամբ. հասարակութիւնը տանում է նաւաստիներին բեստորան եւ այդտեղ հնչում է երաժշտութիւնը, երգում են Marseillaise, ռուսական հիմնը, բացվում են գարեջրի չիշերը եւ խեղճ ֆրանսիացի նաւաստիները հրճվում են օդի մէջ։ Ապա նորից դուրս են գալիս փողոց, նորից ճեմում են փողոցներով եւ նորից հրաւիրվում են հիւրանոցները։ Ամբոխը, չրջապատելով նաւաստիներին, գիտէ միայն արտասանել ֆրանսերէն «միւսիո, վիվ լա ֆրանս» եւ ուրիշ ոչ մի բառ, բայց նա խօսում է միմիկայով. ֆրանսիացին, որ ի մէջ չատախօս է, չէ բաւականանում «vive la Russie» բառերով. նա կանգնում է կառքի մէջ, փողոցի մէջ տեղ, եւ սկսում է ճառել, ճառել «la sainte alliance franco—russe»-ի մասին. խօսում է ճարտար, համոզեցուցիչ, թէեւ հարբած է. ամբոխը բնազդմամբ հասկանում է նրան եւ «բրավո, ուրա» աղաղակներով խրախուսում։ Մի խօսքով, բոլոր փողոցներում կատարեալ ժողովրդական տօն է, որին քիչ չէ նպաստում գեղեցիկ եղանակը եւ փողոցների զարդարանքը։

Բայց ոչ մի տօնախմբութիւն այնքան չքեղ եւ ճոխ չէր, ինչպէս Պետերբուրգի պարբերական մամուլի սարքած բանկէտը ի պատիւ ֆրանսիական մամուլի ներկայացուցիչների։ Այն, ինչ որ անցաւ եւ խօսվեց այդ բանկէտում ռուսաց եւ ֆրանսիական պարբերական ամենօրեայ մեծ մամուլի ներկայացուցիչների կողմից, կարող է համարվել ճշգրիտ արտայայտութիւն այն ընդհանուր տրամադրութեան, որ տիրում է այսօր երկու ազգերի հասարակութեան մեծամասնութեան մէջ։

Հ. Առաքելեան

ընորոշական ցուցակները հրատարակել հէնց այժմ այն ձեւով, որով նրանք արդէն կազմված են։

—

Մեզ հաղորդում են, թէ Բօրչալուի նախկին գաւառապետ Արնօլդ, որ մեղադրվում էր ծառայութեան ժամանակ կատարած յանցանքների մէջ եւ որին Թիֆլիսի դատաստանական պալատը դատապարտել էր երեքշաբթվայ արդելման զինուորական բանտում, կառավարչական սենատի մայիսի 10-ի նիստում արդարացած է իր վրա դրած մեղադրանքներից։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւորներից մի քանիսը յայտարարութիւն ներկայացրին քաղաքագլխի պաշտօնակատար Շեստակովին, որով առաջարկում են խորհրդի կողմից միջնորդութիւն յարուցանել երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան առաջ՝ Մուշտայիդ այգու այն մասը, որ գրաւված չէ կովկասեան շերամապահական կայարանի կողմից, քաղաքին յանձնելու մասին, որպէս զի քաղաքը հնարաւորութիւն ունենայ բարեկարգել Մուշտայիդի այդ մասը՝ ազգաբնակութեան համար յարմարաւոր զբոսաստեղի դարձնելու նպատակով։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Երիտասարդ պ. Էկիզեր, ի յիշատակ նորերս վախճանված իր հօր, վերանորոգում է ս. Խաչ եկեղեցու սանդուխքը եւ արտաքուստ մաքրում ու ներկում եկեղեցին։ Այժմվայ եկեղեցու մուտքը, որտեղ դրված է թամբուռ, պիտի վերցվի եւ դրա փոխարէն մի ընդարձակ եւ լայն փառաւոր սանդուխք պիտի շինվի. աշխատութիւնները պիտի սկսվեն մայիսի վերջերին»։

—

ԲԱՂԱՆԻՍ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Մայիսի 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, «Զրովքեր» կոչված դաշտում, Թուրք Ռաբկեպատ գիւղի Շամիլ աղայի աւազակ որդիները, որոնք փախած են մարդասպանութեան պատճառով, շրջապատել էին 30-ի չափ ձի եւ կամենում էին ծախելու տանել. ձիերը հաւաքված էին Ղազախի զանազան գիւղերից։ Հայ-Ռաբկեպատում բնակվում է ուրեադնիկը ստրաժնիկներով. գիւղացիներից մէկը գաղտնի կերպով իմաց է անում. երկու գիւղերի հեռաւորութիւնը կը լինի 7—9 վերստ։ Ստրաժնիկները չրջապատում են աւազակներին, նշան են տալիս, որ անձնատուր լինեն, վերջինները չեն լսում եւ սկսում են փախչել։ Ստրաժնիկներից մէկի հրացանը թնդում է թէ չէ՝ մէկն աւազակներից գետին է գլորվում, իսկ երկուսին աջողվում է փախչել։ Ուրեադնիկը գաղտնի կերպով հետեւում է նրանց մինչեւ «Կարա-Հանֆի» կոչված գոմերը, որտեղ էր աւազակների փախցրած մի թուրքի հարսը, օգնութիւն ստանալով գոմերը չրջապատում է, իսկ աւազակները տեսնելով, որ ազատվելու հնար չը կայ՝ անձնատուր են լինում։ Նրանց սպանվածի հետ ներկայացնում են Ղազախի պ. գաւառապետին։ Սրանք այն աւազակներն էին, որոնք մօտ օրերում ս. Սարգսում Թիֆլիսից եկող գիւղացիներին կողոպտեցին»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Պարզեանի եռանդը թեմական դպրոցի համար տեսուչ հրաւիրելում եւ խումբ կազմելում կրկնապատկվել է։ Հոգաբարձութեան երեք անդամները հրաժարված են, մէկը չատ քիչ է մասնակցում ժողովին, մնացել են երկուսը՝ որոնք տեսչի պաշտօնակատարի հետ միացած գործում են։ Ահա այս հոգաբարձական կազմը զբաղված է տեսչի խնդրով։ Տալիս են Աբիսողոմ Յովհաննիսեանի անունը, որը այստեղ եղած ժամանակից լաւ անուն ունի հանած Երեւանում։ Այն ինչ, ասում են, մի ուրիշի հետ արդէն գրագրութիւն են վարում»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Այս տարի ամարանոց եկողների թիւը, ինչպէս ասում են, Ղուբայում չատ կը լինի. յունիսի 1-ից Բաքուի նահանգական դատարանի քրէական բաժինն է գալիս այստեղ, ուր կը մնայ երեք ամիս։ Շատ սիրուն եղանակներ է անում մեզանում։ Քաղաքային ակումբի վարչութիւնը աշխատում է աւելի յարմարութիւններ տալ քաղաքային այգուն»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 24-ին, սկսեց իր գործունէութիւնը «Զաթմա» նաւթարդիւնաբերական ընկերութիւնը «Զաթմա» կոչված անապատում։ Այս անապատը գտնվում է Սղնախից դէպի հարաւ, մօտ 50 վերստ հեռաւորութեան վրա, Ղազախի գաւառի սահմանի մօտ, Անդրկովկասեան երկաթուղու Փոյլի կայարանից մօտ 4 վերստ հեռաւորութեամբ։ Զաթմա անապատում գտնվում են նաւթային հողեր. փորուածքները սկսել են։ Բանուորների համար կառուցված է չինութիւն։ Նախաձեռնութիւնը պատկանում է ընկերութեան հիմնադիր պետական խորհրդի անդամ իշխան Աբազային։ Տեղի է ունեցել հանդիսաւոր օրհնութիւն»։

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ մեզ գրում են. «Մեր եկեղեցու սեղանի եւ խորանների նորոգութեան պատճառով, ժամասացութիւնը դադարեցրած է։ Նորոգութեան գործը չատ աջող եւ եռանդով առաջ է տանում երիտասարդ երէցփոխ Ա. Տէր-Աստուածատուրեանց։ Շնորհիւ պ. երէցփոխի արդիւնաւոր գործունէութեան, նախկին հին, փոքր եկեղեցու տեղ հայ գաղութը այժմ ունի համարեա նոր, աւելի մեծ մի փառաւոր եկեղեցի։ Եկեղեցին պատրաստ կը լինի առաջիկայ յունիս ամսին։ Ժողովրդի ցանկութեամբ պ. երէցփոխը մի գրութեամբ խնդրել է մեր Թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսին օծել նորակառոյց սեղանը։ Առաջնորդի գալը մեր եկեղեցական գործերի համար չատ կարեւոր է»։

—

ՇԻՐԱԿԻՑ (Կարսի գաւառ) մեզ գրում են. «Անցեալ օրը Մեծ-Փարկիթ գիւղում Ենոք Աղալոյանը սպանեց դաշոյնով բոլորովին մի անմեղ տղայի, Բագրատ Աւէքեանին, որ օրինակելի էր իր վարքի եւ բարքի մէջ։ Պատճառը այն է եղել, որ Բագրատը յանդգնել է ձիով նրա դռնով անցնելու. մարդասպանը ձերբակալված է։ Գիւղացիները այդ դէպքից սաստիկ յուզված են, խնդիրք են տուել իշխանութեանը, որ բոլորովին գիւղից հեռացնեն մարդասպանի ընտանիքը»։

—

ԹԱԽՏԱԲԱՁԱՐԻՑ մեզ գրում են. «Աւղանատանում սաստիկ տարածված տաւարի ժանտախտը ապրիլի սկզբում մուտք գործեց եւ ռուսաց հողը, Կուչկա։ Աւղանական սահմանի վրա նշանակված էր կարանտին, որի պատճառով ահագին քանակութեամբ բուրդ մնում է մաքսատանը ու սահմանի մօտ թափված։ Սակայն ժանտախտը փոխվեց տեղս եւ երկու օրայում սկսեց իր կոտորածը։ Շնորհիւ անասնաբոյծների եռանդուն գործունէութեան, մնացած օրանները առ այժմ ազատ են այդ վարակիչ հիւանդութիւնից։ Կարանտինի պատճառով տեղս առեւտուրը բոլորովին կանգնել էր։ Մայիսի 2-ին առեւտրականները գնում են պրիստաւի եւ անասնաբոյծների մօտ եւ խնդրում են, որ գոնէ միայն բուրդ ազատ բաց թողնեն. կազմում են ժողով եւ գալիս են այն եզրակացութեան, որ կարելի է. հեռագրով թոյլտուութիւն են խնդրում երկրիս կառավարչապետից, եւ ամսիս 4-ին յայտնում են, որ բոլոր ապրանքները ազատ մուտք են գործում Աւղանատանից ռուսաց հողը, բացի տաւարից եւ կաշուց։ Ցոյս կայ, որ շուտով առեւտուրը նորից կենդանութիւն ստանայ։»

—

ՄԵՂՐԻՒՑ մեզ գրում են. «1900 թուականին Մեղրիի հասակութիւնը, աչքի առաջ ունենալով ցորենի պակասութիւնը եւ օրէցօր թանգանալը, 1900 պուդ ցորեն բերել տուեց։ Ցորենը ստանալուց յանձնեցին մեր գիւղի նախկին տանուտէր Մկրտիչ Տէր-Զաքարեանցին գիւղացիներին հաւասարապէս բաժանելու։ Ցորենը վերջանալուց գտան, որ ներկայ տարվայ պակասորդը անհամեմատ աւել է նախկին տարիների ցորենից եւ հաշուից պարզվեց, որ 40 պուդ ցորեն պակասում է։ Այդ առիթով հասարակութիւնը ներկայ տարվայ մարտ ամսին ընտրեց յանձնաժողով պարզելու այդ հանելուկը։ Ցանձնաժողովի լուրջ քննութիւնից, վկայի տուած ցուցմունքից եւ Տէր-Զաքարեանցի հակասող, վայրիվերոյ խօսքերից հաստատվեց, որ ցորենը գողացել է գիւղի հարուստ Տէր-Զաքարեանցը։ Վերջինս ի զուր էր երդվում որդկերանց արեւով, իզուր էր ճիգ թափում, աշխատում ապացուցանել, որ իբր թէ պակասած ցորենը մկների բաժին է եղել։ Բայց ինչպէս վարվեց հասարակութիւնը Տէր-Զաքարեանցի հետ։ Ցորենի արժէքը 50 ր. 40 կ. ստացաւ, եւ հարցը դրանով էլ վերջացաւ։ Մեր գիւղական կեանքի մէջ երբ նոյնանման կամ աւելի քստմնելի եւ զզուելի գործերը կատարվում են հարուստների, ուժեղների ձեռքով, հասարակութիւնը կամ աւելի լաւ է ասել ղեկավարողները դրամականը ստանալուց յետոյ միշտ անտես են առնում բարոյական պատիժը, իսկ երբ մանր մունր կամ նոյնանման դէպքեր կատարողը լինում է չքաւորը, թոյլերից որ եւ է մէկը, հասարակութիւնը նրա օձիքը բաց չէ թողնում. երկու պատիժները հաւասար կերպով է կրում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Polit. Corresp.» լրագրի խօսքով, կ. Պոլսում յամառութեամբ լուր է տարածվում, թէ մեծ վիզիր Սայիդ-փաշա հրաժարական է տալիս։ Ասում են, որ նրան յուսահատեցնում են այն դժուարութիւնները, որ յարուցանում են նրա առաջ պալատականները։ Վերջերս մեծ վիզիրը աշխատում էր գումարներ հաւաքել՝ վարչական պաշտօնեաների ամսական ռոճիկը վճարելու համար։ Բայց հազիւ թէ նա հաւաքել էր անհրաժեշտ գումարը, եւ ահա նա ստիպված էր, սուլթանի հրամանով, բաժանել այդ գումարը սուլթանի ընտանիքի անդամներին, որոնք պահանջում էին իրանց խոստացված նպաստների վճարը։

—Կ. Պոլսից «Temps» լրագրին հեռագրում են մայիսի 7-ից, որ սուլթանի պալատում մեծ երկիւղի մէջ են այն դժգոհութեան պատճառով, որ նկատվում է սօֆտաների եւ բժշկական դպրոցների աշակերտների միջեւ։

—Բերլինից հեռագրում են «Рус. Вѣд.» լրագրին. «Այստեղ տիրում է հաստատ համոզմունք, որ շուտով խաղաղութիւն կը կապվի հարաւային Աֆրիկայում։ Լօնդօնից հաղորդում են Բոզբերրիի այն խօսքերը, որ նա ասել է ազգային-ազատամիտների ժողովարանում։ Բալֆուրի, Բօբէրտսի եւ Թագաւորի հետ խօսելուց յետոյ Վինդզորում՝ Բոզբէրրի հաւաստիացաւ խաղաղութեան գործի աջողութեանը, մանաւանդ այն հանգամանքից յետոյ, երբ յայտնի դարձաւ, որ բօէրները մասնակցում են բանակցութիւններին՝ հրաժարվելով անկախութեան պահանջից։ Մինիստրների խորհրդակցութեան ժամանակ, որ տեւեց երկու ժամ, կանգնած սպասում էր խորհրդակցութեան արդիւնքին ահագին ժողովուրդ, որ մինիստրների ցրվելու ժամանակ բոլորովին լուռ էր, երբ անցնում էր Չեմբէրլէն, եւ ընդհակառակը՝ ոգեւորված ցոյցեր արեց, երբ անցնում էր Բալֆուր։

—Վալդէկ Ռուսսոյի մինիստրութեան հրաժարականը քննութիւնների եւ բացատրութիւնների է ենթարկվում այժմ Ֆրանսիական ամբողջ մամուլի կողմից։ Լրագիրների հաղորդած տեղեկութիւններով՝ նա տեղի է ունեցել հետեւեալ հանգամանքներում։ Պարլամէնտական կրկնաքուէարկութիւնների հէնց երկրորդ օրը, ապրիլի 29-ին, Վալդէկ-Ռուսսո այցելեց հանրապետութեան նախագահին եւ յայտնեց, որ ինքը վճռել է հրաժարական տալ՝ պատճառաբանելով իր հրաժարականը այն բանով, թէ կատարված ընտրութիւնները, որոնք հանրապետական հաստատուն մեծամասնութիւն տուին, հարթում են նրա՝ վաղուց ցանկացած հրաժարականի ճանապարհը։ Լուրէ սկսեց խնդրել Վալդէկ-Ռուսսոյին մնալ, բայ վերջինը անյողդողդ էր իր վճռի վերաբերմամբ։ Այն ժամանակ նախագահն սկսեց համոզել Վալդէկին գոնէ յետաձգել հրաժարականի տալը մինչեւ նրա վերադարձը Ռուսաստանից. մինիստր-նախագահը համաձայնվեց։ «Gaulois» լրագրի ասելով՝ Վալդէկ-Ռուսսոյի անդրդուելիութիւնը մասամբ բացատրվում է նրանով, որ նրա երկու ընկերակից մինիստրները, Միլերան եւ Անդրէ, յայտնել են, որ որոշել են անշուշտ հրաժարական տալ։ Նոյնը հաստատում է եւ «Times»-ի Պարիզի թղթակիցը։ Վալդէկ-Ռուսսոյի 10 ընկերակիցներից,—գրում է նա,—միայն երեքը պատրաստ են մնալ իրանց պաշտօններում. դրանք են—ֆինանսների մինիստր Կայիօ, արտաքին գործերի մինիստր Դէլկասէ եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Լէյգ։ Մինիստրութեան մնացած անդամները այս կամ այն պատճառով չեն ցանկանում մնալ իրանց պաշտօններում։ Առեւտրի մինիստր Միլերան չէր կարող պահել իր պորտֆէյլը՝ չը բաժանվելով իսպառ իր կուսակցութիւնից։ Արդարադատութեան մինիստր Մօնիսի դրութիւնը վաղուց խախտված էր եւ նա այլ եւս չէր կարող մնալ մինիստրական կազմի մէջ։ Զինուորական մինիստր Անդրէ չափազանց յոգնել է աշխատանքից եւ այն յարձակումներից, որոնք շարունակ թափվում են նրա վրա։ Ծովային մինիստր Լանեսսան զինել է իր դէմ բոլորին նաւատորմի մէջ իր հակակղերական կարգադրութիւններով։ Երկրագործութեան մինիստր Ժան Դիւպիի ակամայից մտաւ մինիստրական կազմի մէջ եւ ձգտում է վերադառնալ դէպի իր մասնաւոր գործերը։ Հասարակական աշխատանքների մինիստր Բոդէն նոյնպէս վճռել է հրաժարական տալ իր մասնաւոր գործերի պատճառով։ Լրագիրները առաջ ենթադրութիւն էին անում, թէ գուցէ Վալդէկ-Ռուսսո յանձն առնի նոր մինիստրութիւն կազմել. այժմ կարծում են, որ այդ մասին խօսք անգամ լինել չէ կարող. նրա հրաժարականը վերջնական է։

—«Moniteur Oriental» լրագրին գրում են Լօնդօնից, թէ մինչեւ այժմ երեւեցած աղմկայոյզ լուրերը բօէրներին տիրող յուսահատութեան եւ նրանց դիտաւորութեան մասին՝ առանց որ եւ է պայմանի անձնատուր լինելու Անգլիային, տարածել են այն բօրսայական սպեկուլեանտները, որոնք խաղում են հարաւաֆրիկական ոսկեայ եւ ադամանդեայ հանքերի արժեթղթերով։ Պատերազմի պատճառով այդ թղթերի գինը չափազանց ընկաւ եւ մեծ վնասներ պատճառեց նրանց տէրերին։ Ահա այս վերջիններն են, որոնք բօէրական զօրապետների խորհրդակցութեան լուրերից օգտվելով՝ չափազանցած տեղեկութիւններ են տարածում հասարակութեան մէջ՝ հանքային արժեթղթերի գները բարձրացնելու նպատակով։ Ինչ վերաբերում է այն բանին, թէ բօէրներին, Դէլարէյի, Դէվէտի եւ Շտէյնի հետ միասին՝ յուսահատութիւն է տիրել,—այդ տեղեկութեան մէջ ոչ մի կէտ ճշմարիտ չէ։ Եթէ մինչեւ անգամ հաւատալու լինենք բօէրական զօրապետներից մի քանիսի յուսահատվելուն,—նոյն իսկ այդ դէպքում էլ խօսք չէ կարող լինել բօէրների անպայման անձնատուր լինելու մասին, «թողնելով Անգլիայի մեծահոգութեան՝ լուծելու աֆրիկանդէրներին ներումն, իսկ Տրանսվալին եւ Օրանժեան հանրապետութեան ինքնավարութիւն շնորհելու հարցերը»։ Տրանսվալի եւ Օրանժեան բօէրները, ինչպէս եւ Կապի, Գրիկէլանդի, Նատալի եւ Բէչուէնլանդի աֆրիկանդէրները այնպիսի սերտ համերաշխութեամբ կապված են միմեանց եւ նրանց մէջ ապրող իրլանդացիների հետ, որ երբէք չեն հրաժարվի ընդհանուր ներումը խաղաղութեան պայմանների sine qua non-ը համարել։ Նոյնպիսի անփոփոխ եւ անխախտ պայման խաղաղութեան համար է եւ կը մնայ բօէրական անկախութեան պահպանումը, որը ահա արդէն կէս դար է, որ կազմում է բօէրների կեանքի նպատակը եւ դիպլոմատիական յարաբերութիւնների, բանակցութիւնների, դաշնագրերի ու սպառազինված ընդհարումների առարկան։ Հրաժարվել այդ անկախութիւնից այն ժամանակ, երբ հակառակորդի վերին աստիճանի լարված ոյժերը արդէն սկսել են թուլանալ, երբ անգլիական ջինգօիզմի ներկայացուցիչները կորցրել են գլուխները այնքան, որ սկսել են սուտ լուրերով հանգստացնել հասարակական կարծիքը,—դա չէ համապատասխանում ոչ առողջ դատողութեանը եւ ոչ իրերի իսկական դրութեանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգի գերմանական դեսպան կոմս Ալվէսլեբէն ճանապարհ ընկաւ արտասահման։—Այսօր ծախվեց 1,400,000 բուբլով «Վեազեմսկայա լավրա» անուանված տունը։

ԿԻԵՎ։ Երէկ երէկոյ տեղի ունեցաւ պայթում դեղագործական ապրանքների պահեստում։

ԽԱՐԿՕՎ։ Բէլգօրոդի գաւառում մեծ տարածութեան վրա սաստիկ կարկուտ եկաւ, որը ոչնչացրեց ցանքսերը եւ խանգարեց գնացքների երթեւեկութիւնը։

ՎԱՐՇԱՎԱ։ Տեղական լրագիրների խօսքով, Վարշավայում կազմակերպվում է մուրհակների եւ պարտագիրների ապահովութեան ընկերութիւն։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրի Պրէտորիայից ստացած տեղեկութեան համեմատ, Բալֆուրի մօտ իր ամբողջ կազմով անձնատուր եղաւ 81 ինդուսներից բաղկացած զօրաբաժինը։

ՊԷՇԱՎԷՐ։ Կաբուլից հաղորդում են, որ էմիրը հրամայեց բանտարկել իր եղբայր Միրզա-Մօհամէդ-Ունար-խանին, իր պալատի կառավարչին եւ Միրզա-Սէդդիգ-խանին եւ դիտաւորութիւն ունի աքսորել նրանց Թիւրքեստանի սահմանը։

ՖՕՐՏ-ԴԸ-ՖՐԱՆՍ։ Երէկ տեղի ունեցաւ հրաբուղխի նոր ժայթքումն. բոցի բարձրութիւնը մէկ ժամ շարունակ 150 ոտնաչափ էր. բերանը 300 մէտր լայնութեան բացուածք ունի։ Փոթորիկը միայն հրաբուխի չրջականերումն էր, բայց չատ վախեցրեց ազգաբնակութեանը։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Աւստրիական դէլէգացիայի ժողովը շարունակում էր բիւջէտի քննութիւնը։ Կրամարի ապացուցանում էր, որ երեքպետեան դաշնակցութիւնը արժանի չէ խրախուսանքի։ Գերմանական կայսրութեան կազմակերպութեան նպաստող պետութիւնների մեծամասնութիւնը այժմ փոշմանում է դրա մասին։ Ոչ մի պետութիւն, նոյնպէս եւ Աւստրիան այլ եւս չեն թոյլ տայ, որ Գերմանիան չարունակէ մեծանալ։ Վուկովիչ ցանկութիւն յայտնեց, որ աւելի մտերմական բնաւորութիւն տրվի Ռուսաստանի հետ ունեցած յարաբերութիւններին նրանք գրաւոր համաձայնութեան առարկայ դառնան։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Մոսկվայի գիւղատնտեսական ընկերութեան՝ քաղաքը յատկացնում է մի մեծ հողաբաժին ցուցահանդէսի համար մշտական շինութիւններ կառուցանելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր Մեծ-Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ գլխաւոր չտաբի կառավարչի ուղեկցութեամբ մեկնեց դէպի Կրոնշտադի մեծ

նաւակայանը։ Գեներ.-Ծովապետին դիմաւորեցին իշխանաւոր անձինք։ Գեներ.-Ծովապետը այցելեց նոր կառուցված «Ասկոլդ» եւ «Նավարին» շրջանաւերը եւ ներկայ եղաւ թնդանօթաձիգների մարզութիւններին։ Այցելելով միւս նաւերը՝ Գեներ.-Ծովապետը մեկնեց դէպի «Սվետլանա» շրջանաւը։

Մայիսի 16-ին

ՀՌՕՄ։ Պատգամաւորների ժողովի Պրինկիպոն յայտնում է, թէ կառավարութիւնը մտադիր չէ հողեր ձեռք բերել Չինաստանում, բայց տնտեսական շահերի պաշտպանութեան համար պէտք է զինուորական նաւեր ունենալ արեւելեան—ասիական ջրերում։

ՊԱՐԻԶ։ Մինիստրութեան առաւօտեան նիստում բոլոր մինիստրները միացան Վալդէկ-Ռուսսոյի վճռին հրաժարական տալու վերաբերմամբ։ Մինիստրութեան հրաժարականի հրամանը կը յայտարարվի միայն երեքշաբթի, երբ Լուբէ կը վերադառնայ Պարիզ։ Լուբէ մը-տադիր է շաբաթ օրը երեկոյեան ուղեւորվել Մոնտէլիմար։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Սրեքպետեան դաշնակցութեան վրա կատարած յարձակումների հերքումից յետոյ Գոլուխովսկու կողմից՝ արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւը ընդունվեց աւստրիական դէլէգացիայի ժողովում։

ԲՈՒԽԱՐԱ։ Պրինց Հէնրիխ Ռէյս, նայելով Բուխարայի նշանաւոր վայրերը, ուղեւորվեց Բայրամալի՝ Թագաւոր Կայսրի կալուածքը նայելու։

ԳԱՆՁԱԿ։ Գանձակում բացվեցին ուսուցչական կուրսեր։ Մասնակցում են 70 քաղաքային եւ գիւղական ուսուցիչներ։ Կուրսերի նպատակն է հաղորդել չերամապահութեան, բամբակաբուծութեան եւ մեղուապահութեան տարրական ուսուցման վերաբերմամբ մէտոդային տեղեկութիւններ։

ՍՕՖԻԱ։ Սերբիական դիպլոմատիական նոր գործակալ Մարինկովիչ ներկայացրեց իշխանին իր հաւատարմագրերը։ Գործակալը իր ճառի մէջ մատնացոյց արեց բարեկամութեան եւ յարգանքի այն զգացմունքների վրա, որ տածում է Ալէքսանդր Թագաւորը իշխանի վերաբերմամբ։ Թագաւորը առանձնապէս խորհուրդ է տուել նրան գործ դնել իր բոլոր ոյժերը ամրապնդելու այն բարեկամական յարաբերութիւնները, որոնց անհրաժեշտութիւնը բացատրվում է ակնյայտնի ընդհանուր շահերով։ Իշխանը պատասխանեց, որ նա ձեռքից բաց չի թողնի ոչինչ, որ պատասխանէ Թագաւորի զգացմունքներին եւ ամրապնդէ բարեկամութեան կապերը Սերբիայի եւ Բոլգարիայի միջեւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կայսերական մարդասիրական ընկերութեան հիմնարկութեան յիսնամեակի առիթով «Правит. Вѣстникъ»-ում տպագրված են Բարձրագոյն հրամաններ Պետերբուրգի միտրոպոլիտ Անտոնիի, խորհրդի անդամ ինֆանտերիայի գեներալ Դէդէօնովի եւ ընկերութեան անուններով։ Կայսերական մարդասիրական ընկերութեան խորհրդի անդամ գեներալ Դէդէօնովին շնորհված է Ս. Անդրէյ նախակոչի շքանշանը։ Կայսերական մարդասիրական ընկերութեան գլխաւոր հոգաբարձու միտրոպոլիտ Անտոնիին շնորհված է Ս. Ալէքսանդր Նեւսցու շքանշանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Ամսիս 19-ին, առաջիկայ կիրակի օրը, առաւօտեան 12 ժամին, Աւետեաց Զգրաչէն ս. Աստուածածին եկեղեցու բարեպաշտ ծխականները յարգոյանքով հրաւիրվում են յիշեալ եկեղեցին՝ ՆՈՐ ԵՐԷՑՓՈԽ ԸՆՏՐԵԼՈՒ։

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեանց
1—2

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

փոխադրվել է Երեւանեան հրապարակ, տուն Գուրգենովի (Սօլոլակսկայա փողոցի անկիւն)։ Ընդունում է հիւանդներին սուաւօտեան 8—2, երեկոյեան 5—8 ժամին.
16—25

ՀՐԱՒԷՐ

Հողեւոր իշխանութեան կարգադրութեամբ, կիրակի, մայիսի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին, Կաթուղիկէ ս. Աստուածածին (ս. Գէորգ) եկեղեցում ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ՆՈՐ ԵՐԷՑՓՈԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ։ Ուստի նոյն եկեղեցու ծխականները հրաւիրվում են յիշեալ օրը եկեղեցի մասնակցելու ընտրութեան։

Նախագահ ընտրութեան՝
Աշոտ քահանայ Թէմուրազեանց
1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ

Ս. ազգների խորհուրդը հաղորդում է ի տեղեկութիւն ժողովարանի պ. պ. անդամների եւ կանդիդատների, որ նրանց մերձաւոր ազգականուհիներին, որոնք յիշված են կանոնադրութեան 17-րորդ յօդուածում, մայիսի 19-ից ժողովարան թոյլ կը տրվի մտնել՝ դրա համար սահմանված առանձին տոմսակներով, որոնք տրվում են ժողովարանի գրասենեակում իւրաքանչիւր օր, երեկոյեան ժամի 8-ից մինչեւ 11-ը, պ. պ. անդամների եւ կանդիդատների անձնագիր ստորագրութեամբ։
2—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԲԺԻՇԿ

Շուլավէրի հասարակութեան համար, գոնէ երկու տարվայ փորձառութեամբ։
Ցանկացողները պէտք է դիմեն տանուտէր Մէհրաբեանին։
2—5

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
ՄԱՐԻԱՄ ԻԼԶԲԱՇԵԱՆ

որ աւարտել է իր կուրսը Իւրեվի Կայսերական կանանց կլինիկայում, ընդունում է հիւանդներին. Հասցէն՝ Грибоѣдовская, № 4.
3—3

ԲԺՇԿԱՊԵՏ

ՄԻՆԱՍ ԶԱԽԱՐԲԷԳԵԱՆ

այս ամառ եւս ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պեատիգորսկ)։
2—6

ԴՕՔՏՕՐ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

այս ամառ եւս տեղափոխում է հիւանդներին հանքային ջրերը (Պեատիգորսկ)։
Пятигорскъ, Вѣрхн. б. д. Султанъ Крымъ-Гирея. 2—10

ՀԱՐԱՒԱՏՈՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ
ՊԱՐՍԻՑ ԾՈՎԻ
ԶԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի ն անաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon C. G. Buchire Persian-Gulf. 10—100

Պերլին *հաստատված պրոֆէսոր Հրանդ Անդրէասեան, մեքենագէտ-ճարտարագէտ, պատրաստ է՝ փոքր փոխարինութեամբ ամեն տեսակ թեխնիքական տեղեկութիւններ հաղորդել իրեն դիմողներուն. կընդունի յանձնարարութիւններ եւ փոխանորդութիւններ. միջնորդել գերմանական ֆապրիքներու մօտ, եւ ածան, լաւ, ու նպատակայարմար մեքենաներ ու էլեքտրական կազմածներ հայթայթել։ Ցանկացողներ պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.*
Herrn Ingenieur H. Antréasian. Berlin N. 65. Rudenarderstrs. 23/30. 0—5

ԲԺՇԿԱՊԵՏ

ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Նախկին տարիների նման, այս տարի եւս կընդունի հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում (Էսսէնտուկիում)։
8—10

ՄԻ ՕՐԻՈՐԴ

Կամենում է հայ ընտանիքի հետ Անապա գընալ։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ, Վելիամինովսկայա փողոց, էժանագին դրադարանում։
2—4

ԲԱԳՈՒ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Կիրակի, մայիսի 19-ին,

ԴԵՐԱՍԱՆ ԱՐՄԷՆԵԱՆ

մասնակցութեամբ դերասանուհի տ. Զմշկեանի, օր. Դանդուրեանի, դերասան Ա. Վրոյրի, բարեհաճ մասնակցութեամբ պ. պ. Աւետեանի եւ Սարգսեանի կը տայ իր վերջին ներկայացումը

I

Վաղաժամ Վճիռ

Կօմ. 3 գործ. Ալֆրէդ դը Միւսէի, թարգման. Զօպանեանի եւ Արմէնեանի

II

ՓՐԻՑԽԷՆ

Դրամա 1 գործող. Զուգերմանի, թարգմ. Ա. Ծատուրեանի

Սկիզբն է 8½ ժամին 1—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մայիսի 19-ին, կիրակի, ժամի 12-ին, պատատարագից յետոյ, ԷՋՄԻԱԾՆԵՑՈՑ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ լինելու է՝ 1) ՆՈՐ ԵՐԷՑՓՈԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ եւ 2) ՔՆՆՈՒԹԻՒՆ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ԵՐԷՑՓՈԽՆԵՐԻ ՀԱՇԻՒՆԵՐԻ։ Ուստի՝ սրանով հրաւիրվում են վերոյիշեալ եկեղեցու բոլոր ընտրող ծխականները՝ որոշած ժողովին մասնակցելու։

Թիֆլիսի բ. մասի գործակալ՝
Գրիգորիս քահանայ Երզնկեանց
1—2

ՄԷԿ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

կամենում է ուղեկցել արտասահման մէկ կնոջ, կամ գնալ ամարանոց շատ փոքր ընտանիքի հետ, կամ պտրապել մէկ կամ երկու աղջկայ հետ։ Գիտէ ֆրանսերէն, հայերէն եւ մուզիկա։
Դիմել՝ Контора Самадова, Дворцовая ул. 5—31

Հարկաւոր են երկու փորձված Ուսուցիչներ

ցէնզ ունեցող, Զանգեզուրի գաւառի Շիրվենանց գիւղի պետական երկդասեան գիւղական դպրոցի համար։ Ուսուցիչները կարող են լինել եւ ամուսնացածներ, ուսուցչութեան իրաւունք ունեցող։ Ի նկատի ունենալով, որ դպրոցում պէտք է սովորեն հայ եւ թուրք երեխաներ, ուսուցիչները պէտք է իմանան հայերէն, ցանկալի էր եւ թուրքերէն խօսակցական լեզուն։ Դպրոցում ուսումը կը սկսվի ներկայ տարվայ սեպտեմբերի մէկից։ Ցանկացողներին խնդրում են վաղօրօք յայտնել իրանց ցանկութիւնը։

Դիմել դպրոցի հիմնադիր Գասպար Տէր-Մարգարեանցին, Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Դոբրժանսկու, № 18, կամ «Մշակի» խմբագրատանը։
5—10

Կարսի հոգեւոր կառավարութեան ատեանում

նշանակված է Ղօշավանքի **„ՏԱՑԼԱՐ“** *անուանված 612 դեսեատին վարելահողերը կապալով տալու ամսիս 29-ին, օրվայ ժամը 12-ին Աճուրդ եւ 31-ին Կրկնաճուրդ։ Մասնակցել ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել նոյն ատենին ամեն օր։ Փակ Դրամներ աճուրդը վերջանալուց յետոյ չեն ընդունվի։*
3—8 *Անդամ կառավարութեան՝ Մինաս աւագ քահանայ*

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են՝

ՀՐԱՏ. ԻՇԽ. Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ, Պատկերազարդ այբուբէն, կուբիկների վրա, թղթէ արկղիկով, Թիֆլիս, 1902 թ. գ. 1 ր.
ԱՐԾՐՈՒՆԻ Վահ. բժ., Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյնը, պատկերազարդ, Թիֆլ. 1902 թ. գ. 15 կ.
ՃՈՒՂՈՒՐԵԱՆ Յար. քահ., Գիւղի այրին, Թիֆլ. 1902 թ. գ. 15 կ.
ՄՈՍՃՈՒԵԱՆՑ Պ., Սրտի վէրքերը (արձակ բանաստեղծութիւններ), Ալէքս. 1901 թ. գ. 10 կ.
ԼԱԼԱՑԵԱՆ Եր., Ազգագրական հանդէս, պատկերազարդ, վեցերորդ տ. VII—VIII գրքեր 1901, Թիֆլիս, գ. 3 ր.

Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (о.) 5—5

„ՈՐՈՏԱՆ“

ՆԱԻԹԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է իր բաժնետէրերին Ընկերութեան դրասենեակը՝ այս տարվայ ապրիլի 1-ից, փոխելու իրանց մօտ եղած ժամանակաւոր բաժնետիրական անդորրագրերը բոլորովին վճարված բաժնետիրական անդորրագրերով։

Անդորրագրերի ընդունելութիւնը եւ տալը կատարվում են ամեն օր, ժամի 10-ից մինչեւ 1-ը. 3—4

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Գտնվում է ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ։ Ուսումնարանը հիմնված է Թիֆլիսի վաճառականական դասակարգից. դասընթացը եռամեայ է։ Առաջին դասարանը ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարտած աշակերտները (1872 թ-ի կանոնադրութեան հաստատ.)։ Ուսման վարձը տարեկան 80 բուբլի է։

Դասընթացքը աւարտողների իրաւունքները.—անձնական պատուաւոր քաղաքացու կոչումն հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ։ Պետական ծառայութեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց քննութեան։ Զինուորագրութեան մէջ—երկրորդ կարգի արտօնութիւններ։

Ուսումնարանը կը բացվի 1902 թ-ի սեպտեմբերի 17-ին։ Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 18-ին։ Ուսումնարանի բնակարանը—Նիկոլաեւսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիեւի։

Խնդիրքները—մետրիկական, կոչման եւ ծաղկի պատուաստման վկայականների հետ միասին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոսի 1-ը։

Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի դիմեկտորը։
6—7

Дозволено Цензурою, Тифлисъ, 16 Мая 190[illegible] г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Б. Ванкская ул.